

Դարձվածքային հոմանիշները ֆրանսերենում և դրանց կիրառման առանձնահատկությունները

Առաքելյան Սվետլանա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-14>

Հանգուցային բառեր: դարձվածք, հոմանիշ, փոխաբերական նշանակություն, կիրառում, ոճ, հաղորդակցություն, թարգմանություն

Լեզուն իր հարստությամբ և բազմազանությամբ հետազոտության անսահման ու անվերջանալի դաշտ է, և լեզվի ընդարձակ տիեզերքում առկա բազմաթիվ ռեսուրսների կողքին հիմնարար դեր ունեն հոմանիշները: Այս հոդվածում, սակայն, կանդիդատանքը հոմանիշների միայն մեկ տեսակին՝ դարձվածքային հոմանիշներին, որոնք առանձնահատուկ նրբերանգ և հետաքրքրություն են պարունակում: Այդ արտահայտություններն ավելի պատկերավոր են, քան դասական հոմանիշները և թույլ են տալիս երանգավորել խոսքը, գույն հաղորդել կամ ուժեղացնել ցանկալի արդյունքը զրուցակցի վրա: Բայց մինչ բուն թեմային անցնելն անդրադառնանք դարձվածքներին, ընդհանրապես:

Դարձվածքային արտահայտություններն, ըստ էության, ոչ միայն լեզվաբառարանային հարուստ պաշար են, դրանք շատ հաճախ արտահայտում են տվյալ լեզվով խոսող ժողովրդի կենսափորձը, հոգեբանական առանձնահատկությունները, կենսակերպն ու աշխարհայացքը: Դրանք կարող են լինել հումորային, սարկաստիկ, գայրույթ արտահայտող և այլն: Այս հուզական բաղադրիչը հաղորդակցության մեջ դարձվածքները դարձնում է հոգեբանական կարևոր գործիք: Եվ, ըստ այդմ, դարձվածքների ուսումնասիրությունը շատ ակտուալ է այսօր, քանի որ առնչվում է լեզվաբանության, հոգեբանության, կրթության, թարգմանագիտության, արհեստական բանականության, մշակութաբանության և այլ ոլորտների մի շարք կարևոր հարցերի հետ:

Դարձվածքների իմացությունն ու կիրառումը բարձրացնում են խոսքի որակը և լեզվամտաձողության զարգացումը:

Դարձվածքները լեզվի արտահայտչականության ու պատկերավորման լավագույն միջոցներից են և հանդես են գալիս թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում: Դրանք խոսքը ոճավորելու հրաշալի միջոցներ են, դրսևորվում են բոլոր տեսակի ոճերում: Մեծ է դարձվածքի դերը գեղարվեստական գրականության մեջ: Դարձվածքներն իրենց իմաստային նրբերանգներով խոսքն ազատում են չորությունից, մտքին տալիս են դիպուկություն ու կենդանություն՝ այլաբանորեն ներկայացնելով ասելիքը: Փոխաբերությունը (վերաիմաստավորումը) դարձվածքի էական հատկանիշն է: Եթե դարձվածքը չունի փոխաբերական իմաստ, ապա այն սովորական, ազատ, ոչ կայուն բառակապակցություն է: Իհարկե, դարձվածքների նման բնութագրում տալիս անհրաժեշտ է նկատի ունենալ դարձվածքի մեջ մտնող բաղադրիչների շարահյուսական կապը, նրանց հարաբերությունն ու իմաստային միաձուլության աստիճանը, ըստ որի էլ կատարվում է դարձվածքների իմաստային-շարահյուսական դասակարգում: Սովորաբար դարձվածքները բաժանում են չորս խմբի:

1. Դարձվածաբանական սերտաճում. այս խմբում ներառված են այն դարձվածքները, որոնց իմաստը չի բխում դարձվածքի մեջ մտնող բաղադրիչ բառերի բառային իմաստներից: Դրանք իմաստային տեսակետից անբաժանելի, միասնական բաղադրիչներ են, որոնց մեջ բառերը, կորցնելով արդեն իրենց ունեցած, հանրորեն ընդունված իմաստը, տվյալ բառակա-

պակցության մեջ վերաիմաստավորվում են և արտահայտում բոլորովին մի նոր իմաստ: Այս դարձվածքների հիմնական հատկանիշը նրա բառային անբաժանելիությունն է, բաղադրիչների իմաստային բացարձակ սերտաճումը: Ինչպես նշում է Սուքիասյանը, նրանց բաղադրիչների մեջ կենդանի, գործող շարահյուսական կապի բացակայության պատճառով նախադասության մեջ հանդես են գալիս իբրև մեկ ամբողջական, անբաժանելի անդամ: Դարձվածքի բաղադրիչ հանդիսացող յուրաքանչյուր բառ ոչ միայն չունի հանրորեն գիտակցված և ընդունված իր բառային իմաստը, այլև ընդհանրապես գուրկ է որևէ ինքնուրույն, առանձին բառային իմաստից:

2. Դարձվածաբանական միասնություն, այս խմբի մեջ մտնում են այն դարձվածքները, որոնք չնայած իմաստաբանորեն նույնպես անբաժան են, ամբողջական, բայց, ի տարբերություն նախորդների, սրանց դարձվածքային ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին փոխաբերական իմաստներով: Այս դեպքում դարձվածքի իմաստը բխում է առանձին բաղադրիչների բառային իմաստների միավորումից, նրանց իմաստների միությունից, բայց այն տարբերությամբ, որ բաղադրիչները հանդես են գալիս փոխաբերական իմաստներով, դարձվածքը ամբողջապես ստանում է վերաիմաստավորված, ընդհանրացված բովանդակություն [2, 8]: Դարձվածքների այս կարգին առաջին հերթին բնորոշ է պատկերավոր իմաստը: Դարձվածքային միասնությունները հիմնականում պատկերավոր արտահայտություններ են, որով և տարբերվում են նույն կազմությունն ունեցող բառերի ազատ կապակցություններից: Այս խմբի դարձվածքները կոչվում են նաև իդիոմներ կամ իդիոմատիկ արտահայտություններ:

3. Դարձվածաբանական կապակցությունը երրորդ խումբն է, որի մեջ մտնում են դարձվածքային այն միավորները, որոնց ընդհանուր իմաստը ամբողջովին բխում է նրանց բաղադրիչ բառերի իմաստներից: Դրանք այնպիսի դարձվածքներ են, որոնց կազմի մեջ մտնող բառերն ունեն ինչպես ազատ, այնպես և դարձվածաբանորեն կապված գործողություն: Այս կարգի դարձվածքներում բաղադրիչներն հիմնականում պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, բայց իրենց կապերով, այնուամենայնիվ, մտնում են կախյալ վիճակում, բաղադրիչներից մեկը հաճախ հանդես է գալիս փոխաբերական իմաստով: Այլ կերպ ասած՝ սրանց ընդհանուր նշանակությունը լիովին կախված է բաղադրիչների նշանակությունից, ուստի և հաճախ կազմվում են ազատ և դարձվածաբանորեն կապված բաղադրիչներից [2, 9]:

4. Դարձվածաբանական արտահայտություն են համարվում այն կայուն դարձվածաբանական արտահայտությունները, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն անբաժանելի են, այլև կազմված են ամբողջապես ազատ իմաստ ունեցող բառերից, դրանց իմաստը բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ-բառերի բառային իմաստից: Սրանց շարքն են դասվում նաև առածա-ասացվածքային արտահայտությունները և անգամ հեղինակային դիպուկ արտահայտություններն ու թևավոր խոսքերը [2, 9]:

Մեծ է ու բազմաբնույթ դարձվածքի ոճական արժեքը հատկապես գեղարվեստական խոսքում. այն նախ և առաջ պատկերավոր ու տպավորիչ է դարձնում խոսքը, նպաստում նրա հակիրճությանն ու սեղմությանը, ազգային երանգավորում հաղորդում և հեղինակի, և կերպարների խոսքին, բացահայտում նրանցից յուրաքանչյուրին բնորոշ լեզվամտածողությունը: Հենց այս տեսանկյունից էլ կոդիտարկենք դարձվածքային հոմանիշները:

Ի՞նչ ենք հասկանում դարձվածաբանական հոմանիշ ասելով:

Դարձվածքային հոմանիշները նախադասության մաս կազմող արտահայտություններ կամ կառույցներ են, որոնք ունեն միևնույն նշանակությունը, բայց տարբեր ձևակերպում

կամ կառուցվածք: Դրանք թույլ են տալիս ոչ միայն հարստացնել խոսքը, այլ նաև հարմարեցնել այն տարբեր համատեքստերում: Այս հոդվածում նպատակ ունենք ներկայացնել, թե ինչ է ներառում դարձվածաբանական հոմանիշների կիրառումը, դրանց կարևորությունն ու գործառնությունը հաղորդակցության մեջ:

Ի տարբերություն դասական հոմանիշների, որոնք սովորաբար մեկ բառով են արտահայտված (beau= joli-գեղեցիկ), դարձվածքային հոմանիշները պարունակում են իդիոմատիկ կառույցներ կամ պատկերավոր արտահայտություններ: Դրանք կիրառվում են խոսքն ավելի բազմազան դարձնելու, խոսքին ռիթմ հաղորդելու կամ կրկնություններից խուսափելու նպատակով:

Դարձվածքային հոմանիշները միշտ չեն, որ կարող են փոխարինել միմյանց բոլոր համատեքստերում, քանի որ դրանք հաճախ ունեն տարբեր կոնոտացիաներ և կարող են ավելացնել արտահայտությանը հատուկ նրբություններ: Օրինակ "avoir la tête dans les nuages" - գլուխն ամպերի մեջ և "être distrait"-ցրված լինել արտահայտությունները կարող են ցրվածության նույն աստիճանն արտահայտել, բայց առաջինում առկա է երազկոտության նրբերանգ, մինչդեռ երկրորդ արտահայտությունը չեզոք է:

Դարձվածաբանական հոմանիշները շատ ճկուն են, ինչը թույլ է տալիս հարմարեցնել խոսքն ըստ համատեքստի կամ նույնիսկ ըստ գրույցի ոճի: Այդպիսով, հնարավոր է հաղորդագրությանը տալ ավելի պաշտոնական, ավելի մտերմիկ կամ նույնիսկ հումորային երանգ՝ ըստ ընտրված արտահայտության:

Ինչպես արդեն նշեցինք, դարձվածաբանական հոմանիշները կիրառվում են տարբեր նպատակներով: Դիտարկենք դեպքերն առանձին-առանձին:

Դրանք կիրառվում են առաջին հերթին կրկնությունից խուսափելու համար: Այս գործառնության առաջնային է հատկապես այն դեպքում, երբ դարձվածքներն ունեն հիմնականում չեզոք երանգ, բայց, այնուամենայնիվ, ամբողջովին չենք բացառում նաև արտահայտչականության տարբեր մակարդակները:

Դիտարկենք օրինակներ.

Faire d'une pierre deux coups՝ բառացի՝ մի քարով երկու հարված տալ կամ հայերեն համարժեք տարբերակով՝ մի զարկով երկու նպատակով խփել → **Régler deux problèmes en une seule action** – երկու խնդիրը մեկ գործողությամբ լուծել: Այս տարբերակներն, իհարկե, ոճային առումով տարբեր են, բայց կիրառելի են և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ համատեքստերում: Դա թույլ է տալիս խուսափել կրկնությունից, միևնույն ժամանակ չենք կարող չնկատել, որ առաջին տարբերակն ավելի արտահայտիչ է դարձնում խոսքը:

Prendre qn la main dans le sac (բառացի՝ ձեռքը բռնել պալաուսակի մեջ) – **prendre qn le nez sur la chose** (մեկի քիթը բռնել գործի վրա) – բռնել գողության պահին – երկուսն էլ հավասարապես ունեն արտահայտչականությունն ու ժեղացնող հատկություն և նույն ոճի են, հետևաբար նույն տեքստում կիրառվելիս թույլ կտան խուսափել կրկնությունից:

Առավել հաճախ դարձվածքային հոմանիշների գործածությունը նպատակ ունի արտահայտչականությունը բարձրացնելու: Դրանք կարող են կիրառվել նույն համատեքստում կամ ունենալ տարբեր ոճային կիրառություն:

Դիտարկենք օրինակներ:

Poser un lapin [4, 586] – (բառացի՝ նապաստակ դնել), այս արտահայտության արմատները գալիս են հին ժամանակներից, և մինչև 19-րդ դար այն ուներ հետևյալ նշանակությունը. հեռանալ առանց վճարելու աղջկա բարեհաճ վերաբերմունքի դիմաց: Ներկայումս կիրառվում է ոչ պաշտոնական, խոսակցական համատեքստում և նշանակում է չներկայա-

նալ հանդիպմանը, որն իր մեջ ծաղրական նրբերանգ ունի: Բնականաբար այն չի կարող կիրառվել, օրինակ, պաշտոնական համատեքստում: Փոխարենը ունենք **Ne pas se présenter à un rendez-vous** արտահայտությունը - չներկայանալ հանդիպմանը, որը կիրառելի է ցանկացած համատեքստում, քանի որ չեզոք է:

Appeler un chat un chat [4, 203] (բառացի՝ կատվին կատու ասել) → **Dire les choses telles qu'elles sont** (իրերն իրենց անունով կոչել). առաջին տարբերակն անհամեմատ ավելի արտահայտիչ և ազդեցիկ է դարձնում խոսքը, զգացվում է նաև հումորային նրբերանգ, մինչդեռ երկրորդը չեզոք է:

Il n'y a pas un chat [4, 203] - il n'y a personne - ոչ ոք չկա:

Avoir le moral dans les chaussettes (բառացի՝ հոգեվիճակը գուլպաներում է) իրեն զգում է գետնին հավասարված - **Être abattu (կոտրված լինել)**

Être sur son trente-et-un (բառացի՝ երեսունմեկով լինել) - արտահայտության ակունքներին նայելով՝ պարզ երևում է, որ այն ակնհայտորեն աղավաղվել է: Ի սկզբանե դարձվածքն այսպիսին էր **Être sur son trentain**, որտեղ trentain-ը թանկարժեք և միայն քչերին հասանելի գործվածք էր, որը շատ հարուստ և ներկայանալի տեսք էր հաղորդում կրողին: Հետևաբար՝ ավելի հասկանալի է դառնում դարձվածքի իմաստը, այն է՝ էլեգանտ և ճաշակով հագնվել → **Être bien habillé (չեզոք է)**: Այս երկու արտահայտություններն ունեն նույն իմաստը, բայց առաջինն ավելի հատուկ է ոչ պաշտոնական համատեքստին և հաճախ հատուկ առիթների հետ է ասոցացվում:

Ne (pas) dire (souffler) mot (un mot) [1, 188] (բառացի՝ մի բառ չփչել), **=ne pas ouvrir la bouche [1,188]** (բերանը չբացել, հայերեն բերանը փակ պահել) նույն իմաստն ունի, բայց ավելի արտահայտիչ է հստակ պատկերավորման շնորհիվ, **=ne pas piper un mot (fam) [1, 188]** (բառացի՝ մի բառ չծվալ, խսկց.) կարող է գործածվել միայն խոսակցական համատեքստում, **=garder le silence** (լռություն պահպանել), **=ne pas desserrer les dents [1, 188]** (բառացի՝ ատամները չբացել, լեզուն պահել ատամների ետևում) - լռել:

Հատկանշական է, որ ֆրանսերենում գերակշռում են ժխտական ձևերը, մինչդեռ հայերենում ավելի հաճախ հանդիպում են հաստատական կառույցներ:

Jouer sur les deux tableaux [1, 159] (բառացի՝ երկու քարտի վրա խաղալ),

=nager entre deux eaux [1, 159] (բառացի՝ լողալ երկու ջրերի մեջ) երկակի խաղ խաղալ:

Jouer franc jeu [1, էջ 158] (ազնիվ խաղ ցուցադրել) = **jouer (mettre) cartes sur table** (խաղաքարտերը սեղանին դնել) [3, 571]:

Avoir les yeux plus gros que le ventre (աչքերը փորից մեծ են) = **Être trop ambitieux par rapport à ses capacités** (հնարավորությունների համեմատ շատ հավակնոտ լինել):

Être un sot en trois lettres (կատարյալ հիմար լինել) = **être bête comme un âne** (ավանակի նման հիմար լինել) (un chou, la lune, une oie, une dinde, un dindon, une carpe, une grenouille, un hareng saur, une cruche, un panier, un pot, une souche, comme ses pieds(fam), (կաղամբի, լուսնի, սագի, հնդկահավի, ձկան, գորտի, ձկան պահածոյի, սափորի, զամբյուղի, արմատի, իր ոտքերի նման)

=ne pas inventer la poudre [1, 100] (խսկց.)-այս արտահայտության հիմքում ընկած է ժարգոնային poudre բառը, որը թմրանյութ է նշանակում: Դրա ազդեցության տակ եղած մարդը, որպես կանոն, ոչ աղեկվատ և հիմար վարք է դրսևորում, որտեղից էլ հասկանալի է դառնում դարձվածքի իմաստը: Այս դարձվածքն, իհարկե, ծաղրական նրբերանգ ունի և միայն խոսակցական ոճին է հատուկ:

=être bête à manger du foin (de la paille) (խսկց.)-հիմար, խոտակեր լինել,

=être bête à faire peur- վախեցնելու չափ հիմար լինել,

= bête à pleurer- լացելու աստիճան հիմար լինել,

=bête comme cochon (ժող.) -խռճկորի պես հիմար:

Mettre le doigt sur=frapper dans le mille [1, 176] – խփել նշանակետին, հաջողության հասնել: Արտահայտությունը ծագել է 20-րդ դարում, երբ ստեղծվեց տիրը, որտեղ հաղթելու հավանականությունը մեծանում է, եթե կենտրոնին (1000-mille) է կպչում հարվածը: Համարժեք հոմանիշներ են, հավասարապես կիրառելի տարբեր համատեքստերում:

Հետևյալ 4 հոմանիշներն իմաստային և ոճաբանական առումով հավասարագոր են, սակայն ունեն արտահայտչականության տարբեր աստիճան.

Mouillé jusqu'aux os-մինչև ոսկորները թրջված լինել

=Mouillé (trempé) comme un canard (բառացի՝ բաղի պես թրջված) – հայերեն համարժեքն է թրջված հավ:

=Mouillé (trempé) comme un chien qui sort de l'eau – ջրից դուրս եկող շան նման թաց, կամ շան նման թրջված:

=Trempe comme une soupe [1, 185] – այս արտահայտության մեջ une soupe բառը կիրառվել է իր հնացած իմաստով՝ հացի բարակ շերտ:

Mettre des gants [1, 167] – բառացի՝ ձեռնոցներ կրել-զգուշ լինել, զգուշանալ

= marcher sur des œufs [1, 167] - բառացի՝ քայլել ձվերի վրայով- գործել զգուշորեն

Հետևյալ հոմանշային խմբերում արտահայտություններն ունեն նույն իմաստը և ոճը, տարբերվում են միայն ինտենսիվությամբ.

Triste à pleurer - լացելու աստիճանի տխուր

=triste comme un bonnet de nuit – գիշերային գլխանոցի նման տխուր, ձանձրալի

=triste comme la porte d'une prison [1, 268] – բանտի դռան պես տխուր

=triste comme la mort (un croque-mort, un enterrement) – մահու չափ տխուր (թաղման նման)

=triste comme un jour sans pain – առանց հաց օրվա նման տխուր

=triste comme un lendemain de fête – քեֆի հաջորդ օրվա նման տխուր, ձանձրալի

=triste comme une maison démeublée – դատարկ տան պես տխուր:

Travailler comme quatre – 4 հոգու տեղ աշխատել

=Travailler comme un mercenaire [4, 645] – վարձկանի նման աշխատել

=Travailler comme un cheval (un bœuf, une brute, une bête de somme) – ձիու պես աշխատել

=Travailler comme un fou (une perdue) – խելագարի պես աշխատել

=Se tuer de travail à la peine (tâche) - կոտորվել, մեռնել աշխատելով

=Travailler comme un nègre – ստրուկի նման աշխատել,

=Bûcher (trimer) comme un nègre – նեգրի նման աշխատել

Վերոնշյալ բոլոր արտահայտություններն ունեն նույն նշանակությունը, սակայն առաջինը պակաս ինտենսիվություն է ենթադրում, մինչդեռ յուրաքանչյուր հաջորդ արտահայտությունն ավելի ու ավելի ծանր աշխատանք տանելու մասին է:

Tomber au bon moment – ճիշտ պահին հասնել

Tomber à pic – թեժ պահին հասնել

Arriver comme mars (marée) en carème-բառացի՝ մակընթացության նման ճիշտ ժամանակին գալ պահքի ընթացքում. դարձվածքը ծագել է այն փաստից, որ կաթոլիկ եկեղեցու հետևորդների հիմնական սնունդը պահքի ընթացքում ձուկն է եղել, և մակընթացությունն

այդ ընթացքում ամենացանկալի երևույթն էր, որովհետև ալիքն իր հետ բերում է նաև ձկան մեծ պաշար, հետևաբար այն ճիշտ ժամանակին է գալիս:

Դարձվածքային հոմանիշների շարքն անվերջ կարելի է շարունակել, ֆրանսերենի շտեմարանում դրանք բազմաթիվ և բազմազան են: Այս հոդվածում փորձեցինք ներկայացնել դրանց մի փոքր մասնաբաժինը:

Եզրակացություն

Դարձվածքները և մասնավորապես դարձվածքային հոմանիշները լեզվական հարուստ ու բարդ շերտ են, որոնք ոչ միայն հարստացնում են լեզվի արտահայտչականությունը, այլև նպաստում են հաղորդակցման տարբեր նրբերանգների դրսևորմանը: Դրանք կարող են խոսքին հաղորդել հումոր, գեղարվեստականություն, հուզական երանգ, կենդանություն, օգնում են խուսափել կրկնությունից: Վերոնշյալ օրինակներում տեսանք, որ դրանցից շատերը, շատ հաճախ արտահայտելով նույն իմաստը, ունեն տարբեր ոճական կիրառություն և հանդես են գալիս տարբեր համատեքստերում: Մինևնույն ժամանակ քիչ չեն նաև ոճային նմանություններով հոմանիշները, որոնք տարբերվում են միայն արտահայտչականության ուժգնությամբ: Դարձվածքային հոմանիշներ շատ հաճախ կազմվել են դարձվածքի միայն մեկ միավորի փոփոխմամբ, բայց այդ միավորի շնորհիվ ստացել ոճական նման կամ բոլորովին տարբեր կիրառություն, իմաստային նման կամ բոլորովին տարբեր ինտենսիվություն, երբեմն մշակութային յուրօրինակ երանգ են հաղորդում:

Դարձվածքային հոմանիշների ճիշտ կիրառությունը պահանջում է լեզվի գերազանց իմացություն, բայց միայն դա բավարար չէ: Շատ կարևոր է համատեքստային ընկալումն ու մշակութային առանձնահատկությունների իմացությունը: Մա մեկ անգամ ևս ապացուցում է, որ դարձվածքների և դարձվածքային հոմանիշների ուսումնասիրությունն անհրաժեշտ և շատ ակտուալ է ֆրանսերենի դասավանդման և ուսումնասիրության ժամանակ, քանի որ լեզուն միայն լեզվաբառարանային պահեստ չէ, այն իր մեջ ներառում է նաև լեզվակիր ժողովրդի հոգեբանությունը, մշակույթը, պատմական տարբեր ժամանակահատվածների դրոշմն այդ ժողովրդի և պետության վրա և այլն:

Դարձվածքային հոմանիշների ուսումնասիրությունը շատ կարևոր է նաև թարգմանչական պրակտիկայում, մասնավորապես գեղարվեստական գրականության թարգմանության դեպքում դրանց համապատասխան կիրառումն առանձնահատուկ շքեղություն, դիպուկություն և կենդանություն է հաղորդում ստեղծագործությանը: Դրանք նաև թույլ են տալիս թարգմանության ընթացքում չկորցնել բնագրի լեզվամշակութային առանձնահատկությունը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-14>

Գրականություն

1. Липшицене-Зибуцайте Э.И. Фразеологические синонимы французского языка. Ленинград, 1971, 396 с.
2. Սուքիասյան Ա. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975, 634 էջ:
3. Բեդիրյան Պ. Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, 2011, 1410 էջ:
4. Jean D., Mathée G., Louis G., Dictionnaire: Larousse, Paris, VUEF, 2001, 1790 p.

Фразеологические синонимы во французском языке и особенности их употребления

Аракелян Светлана

Резюме

Ключевые слова: идиома, синоним, переносное значение, употребление, стиль, коммуникация, перевод

Фразеологизмы, особенно фразеологические синонимы, представляют собой богатый и многослойный пласт языка, который не только усиливает выразительность речи, но и помогает передавать тончайшие оттенки смысла. Они придают высказыванию юмор, образность, эмоциональную насыщенность и живость, а также позволяют избегать нежелательных повторов.

Правильное использование фразеологических синонимов требует не только глубокого владения языком, но и умения воспринимать их в контексте, а также знания культурных особенностей. Это вновь подтверждает, что изучение фразеологизмов и фразеологических синонимов является важным и актуальным в процессе преподавания и освоения французского языка. Ведь язык это не просто набор слов, а отражение психологии носителей, их культуры, следов исторических этапов в жизни народа и государства и многого другого.

Изучение фразеологических синонимов крайне важно и в переводческой практике, особенно при переводе художественной литературы, поскольку их правильное применение придает произведению особую выразительность, точность и живость. Они также позволяют сохранить языковые и культурные особенности оригинала при переводе.

Conversational Synonyms in French and the Specific Features of their Use

Arakelyan Svetlana

Summary

Key words: idiom, synonym, figurative meaning, usage, style, communication, translation

Idioms and, in particular, idiomatic synonyms are a rich and complex layer of language that not only enhance the expressiveness of a speech, but also contribute to the conveyance of subtle nuances in communication. They can add humor, artistry, emotional tone, and liveliness to speech, helping to avoid repetition.

The correct use of idiomatic synonyms requires an excellent command of the language, but merely that is not sufficient. Contextual understanding and knowledge of cultural specifics are also crucial. This once again proves that the study of idioms and idiomatic synonyms is essential and highly relevant in the teaching and learning of French, as language is not merely a lexical repository, it also encompasses the psychology of its speakers, their culture, the imprint of different historical periods on the people, the state, and more.

The study of idiomatic synonyms plays a crucial role in translation practice, especially in literary translation. Their skillful use adds elegance, precision, and vividness to the text, while also helping to preserve the linguistic and cultural nuances of the original work.

Ներկայացվել է 15. 05. 2025 թ.
Գրախոսվել է 03. 06. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.